

**Ռանկնդրեցէ՛ք ՌԱՏԻՕ ՍԵՒԱՆ-ը**  
Լիբանանի բոլոր շրջաններուն մէջ, հետեւեալ ալիքներուն վրայ  
\* Լիբանանի եւ Սուրիոյ ծովեզերեայ շրջաններուն, Լեռնալիբանանի, Պեքաայի, Սայտայի եւ Թրիփոլիի մէջ՝ 101.5 FM ալիքին վրայ:  
\* Զիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններուն մէջ 101.3 FM ալիքին վրայ:  
\* Պէյրութի եւ Լեռնալիբանանի մէջ նաեւ՝ 90.8 FM ալիքին վրայ:  
Ֆեռ.: 01-567161-2-3 Fax: 01-567168  
\* Cablevision 11700 GHz digital. \* Կայքէջ: [www.radiosevan.com](http://www.radiosevan.com)

## ՀՈԾ ԲԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՌՉԵՒ, ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ՝ ԸՆԿԵՐ ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆ ԸՍԱԲ.

### «ԲՈՒՐՍ ՄԻԱՍԻՆ ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԱԴՐԵՆՔ ԹԱՅԷՉԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ»

Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններէն մեզի կը բաժնեն ընդամենը քսան օրեր: Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութիւնը, շնորհիւ լիբանանեան քաղաքական կեանքէն ներս յանուն երկրին ամբողջականութեան, անկախութեան եւ գերիշխանութեան պայքարին մէջ ունեցած դերակատարութեան, վայելած վարկին ու հեղինակութեան, անգամ մը եւս լիբանանեան խորհրդարանէն ներս պիտի ունենայ իր սեփական ներկայացուցիչը, յանձնիս՝ ընկեր Սեպուհ Գալիփաբեանին: Այն վստահութիւնը, որ Յնչակեան կուսակցութիւնը կը վայելէ լիբանանեան քաղաքական բեմին վրայ կու գայ հիմնէ, շատ հիմնէ՝ Լիբանանի մէջ կուսակցութեան առաջին քայլերէն, այն հեռաւոր օրերէն, երբ մեր հաւատարմ ընկերներէն շատ շատեր, յաճախ կեանքի գնով պայքարեցան յանուն Լիբանանի անկախութեան, անոր արաբական դիմագիծին պաշտպանութեան, յանուն անոր քաղաքական ու ազգային անկախութեան: Կուսակցութեան արձանագրած յաղթանակը պարզապէս խթան մըն էր՝ ազատ, գերիշխան ու ժողովրդավարական հայրենիքի մը կայացման համար կուսակցութեան արեւելումը աւելի վճռակամ շարունակելու: Ժիշդ այս նպատակաւ, Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան Լիբանանի Երջանի Վարիչ Մարմինը Ծաբաթ, 16 Մայիս 2009-ի երեկոյեան, իին Սահակեան վարժարանի բացօթեայ տարածութեան կից կազմակերպեց հրապարակային ընտրական հաւաք մը: Ընդերք երկու հազար հայորդիներ մեկտեղուած էին իին Սահակեանի տարածքին մէջ: Հանրահաւաքին ներկայ գտնուեցան պետական նախարար Ժան Օղասապեան, պետական երեսփոխաններ Սեթր Սեթր Թուրաբազիսեան, Ընկ. տոքթ. Եղիկ Ճերեբեան, Յակոբ Գասարճեան եւ լիբանանեան խորհրդարանի խորհրդարանի անդամ Ընկեր Սեպուհ Գալիփաբեան, Պէյրութի երկրորդ ընտրաշրջանի Սիւննի համայնքի պատկան աթոռին Մուսթաքալալ Հոսանքի թեկնածու Նուհատ Մաշնուք, պետական անձնատրութիւններ, Մարտ 14-ի Ուժերու պատկան կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Ռամկավար Ազատական կուսակցութեան պատուիրակութիւն մը, Ազատ Լիբանանահայերու շարժումի պատուիրակութիւն մը, Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան Լիբանանի Երջանի Վարիչ Մարմինը իր ատենապետին Ընկեր տոքթ. Մարտիկ Ժամկոչեանի զխաւորութեամբ, հայ կուսակցական, մարզական, մշակութային, բարեսիրական միութեանց, ինչպէս նաեւ մամուլի ներկայացուցիչներ:

Հ.Մ.Ս. փողերախումբին կատարողութեամբ ներկաները յոտնկայս լսեցին Լիբանանի եւ Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան քայլերգները: Յանուն Լիբանանի Երջանի Վարիչ Մարմնի Ընկ. Ալեքսան Զեռլեբեան, բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգել Մարտ 14-ի քաղաքական եւ գաղափարական ուղեգիծին համար նահատակուած գործիչներուն յիշատակը: Ապա ան հայերէն եւ արաբերէն լեզուներով ներկաներուն բացատրեց սոյն հանրահաւաքին խորհուրդը: Ան ըսաւ. «Սիրելի հայրենակիցներ, բարեկամներ եւ ընկերներ. Այս ընտրութիւններուն մեր ընտրանքները եւ դիրքորոշումները կը բխին Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան գաղափարական ակունքներէն՝ Յնչակեան կուսակցութիւնը կը հաւատայ եւ կը ձգտի կայուն, ամուր եւ արդար պետականութեան կայացման: Մենք կը հաւատանք, որ միայն արդար պետութիւնը երաշխիք է իր բոլոր քաղաքացիներուն բարօրութեան եւ բարեկեցութեան:



Սիրելիներ, Յունիս 7-ին բոլորս հրաւիրուած ենք հոծ շարքերով մասնակցելու ընտրութիւններուն, որովհետեւ իւրաքանչիւր բուն որ կը ձգեց ստուկներուն մէջ ի նպաստ Յնչակեան կուսակցութեան եւ անոր դաշնակից ցանկերուն մեզի աւելի կը մօտեցնեն այն Լիբանանին, որ մենք կ'երագնք ունենալ:

կան պայքարի ընթացքին: Ան ըսաւ, որ խորհրդարանի ընտրութիւնները պիտի ըլլան ճակատագրական համայն Լիբանանի համար: Պարոն նախարարը մերժեց պետական զենքէն բացի ապօրինի զենքի գոյութիւնը եւ դիտել տուաւ որ յառաջիկայ ընտրութիւնը ընտրանք մը պիտի ըլլայ պետութեան եւ փոքր անիշխան պետութիւններու միջեւ: Ան ըսաւ. «Սիրելի Հայրենակիցներ, ճակատագրական եւ կարեւոր հանգրուանի մը առջեւ կը գտնուինք եւ պայքարի նոյն ճամբուն վրայ: Եթէ հասնիք խորհրդարան, այդ պիտի ըլլայ ձեր շնորհիւ եւ պետք է բոլորս լաւ գիտնանք թէ ճիշդ ընտրութիւն կատարելու համար պետք է գիտակցիցք եւ յարգեցք ընտրութեան ճշմարիտ իմաստը եւ նպատակը: Ընտրութիւն կատարելը Լիբանանի ժողովուրդին շահերն ու իրաւունքները պաշտպանելն է, անոնց մտահոգութիւններն ու հիմնականիւրները օրինական եւ քաղաքական ճամբաներով կտրուկ լուծելն է: Արդարութիւն, ազատութիւն բառերը լոզունքներու սահմանին մէջ պետք չէ մնան այն պետք է ըլլան իւրաքանչիւր լիբանանցիի արդար իրաւունքը: Այսօր աւելի քան երբեք դուք տեղն էք այս պետութեան եւ պատասխանատուն ձեր եւ ապագայ սերունդներուն առջեւ այն ընտրութիւններով, որ պիտի կատարեք քուէատուիներուն մէջ 7 Յունիսին: Մենք վստահ ենք որ Լիբանան պիտի շարունակէ պահել հայապահպանման իր կարեւոր դերը իր ազգային, հոգեւոր, կրթական եւ մշակութային արժեքներով: Մենք այսօր բոլորս կը գտնուինք Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան կազմակերպած ընտրական հաւաքին: Կուսակցութիւն մը, որ 122 տարիներ շարունակ տարած է հետեւողական եւ բոլորաձայն պայքար ի խնդիր ազգային, հայրենասիրական եւ համամարդկային սկզբունքներուն: Պատրաստուինք բոլորս Յունիս 7-ին ուղղուելու դէպի քուէատուի արժեւորելով մեր ծայր յանուն՝ 14 Մարտի ցանկերուն, պետականութեան կայացման, յանուն՝ ազատ, անկախ եւ գերիշխան Լիբանանին: Յունիս 7-ը պայքարի եւ յաղթանակի օր մը պիտի ըլլայ մեր բոլորին համար: Պէյրութի Առաջին ընտրաշրջանի Հայ Կաթողիկէ համայնքի պատկան աթոռի Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան յատուկ ուղջոյն մը յղեց Նոր Հաճնոյ եւ Խալիլ Պատաուկի բնակիչներուն: Ան յայտնեց, թէ Յունիս 8-ին դարձեալ միասին համախմբուած պիտի տօնենք Մարտ 14-ի Ուժերուն ընտրական յաղթանակը: Սեթր Սեթր Թուրաբազիսեան ըսաւ, թէ կսկսած չունէր խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններուն համար Մարտ 14-Ուժերուն յաղթանակը: Ան ըսաւ. «Մենք երեսփոխանական ընտրութիւններու պայքարը կը մղենք ի խնդիր քրիստոնեաներու իրաւունքներուն վերահաստատման»



Հետեւաբար, Օն ընկերներ, դէպի 7 Յունիս, յանուն ազատ, անկախ, գերիշխան Լիբանանին»: Ապա ան բեմ հրաւիրեց Ռամկավար Ազատական կուսակցութեան Պէյրութի Առաջին ընտրաշրջանի Հայ Առաքելական համայնքին պատկան աթոռին թեկնածու Ժան Օղասապեանը: Յարգելի նախարարը դրուատեց Յնչակեան կուսակցութեան խիզախ կեցուածքները Լիբանանի պատմութեան, ինչպէս նաեւ Հայ Ազգային Ազատագրա-



(Շար.ը՝ 4րդ էջ)